սը անհետացաւ գետնի տակ մի փոսի մէջ, մնաց այնտեղ երեք տարի թաղնուած, յետոյ ելաւ նոր առաքելութեան համար:

Ստրաբոնի տեղեկութեամբ, Զալմոքսը սկզբում քուրմ էր, յետոյ աստուածացաւ, եւ որ քաշւում էր անմատոյց տեղեր, եւ ճգնում էր քարայրներում, եւ տեսակցում միմիայն թագաւորի հետ եւ նրան պատգամներ տալիս: Այս է պատճառը, աւելացնում է հռչակաւոր աշխարհագիրը, որ այժմ էլ Գետ թրակիական ժողովուրդի թագաւորը միշտ մի խորհրդական ունի, որ եւ համարւում է աստուած. (Strab. VII 3. 5.):

Նոյն կերպ եւ Ատիսը, Ադոնիսը եւ նման աստուածութիւններն ու դիւցազները տարէցտարի անյայտանում էին, որ յետոյ երեւին, մեռնում էին, որ յետոյ յարութիւն առնեն: Արէսն էլ, տեսանք, մնաց 13 ամիս կալանաւոր երկաթէ թոնրի մէջ, ուրեմն փոսի մէջ եւ յետոյ արձակուեց:

Հռչակաւոր Զրադաշտը, Իրանի մեծ մարգարէն, նմանապէս փակուեց թագաւորի հրամանով, փոսի մէջ, (Zendani gah), ուր մի բարեպաշտ ամէն օր հաց էր ձգում: (Le livre de Zoroastre Zaratust nama. Fr. Rosenberg 1904, էջ 49):

Հայ բուն ժողովրդական միջավայրում, ռամիկ խաւերում (ոչ տիրող նախարարական շրջանում) տակաւին մեռած չի եղել հինաւուրց հաւատալիքը: Եւ այդ է, որ Գրիգորին 13 տարի ապրել է տալիս խոր եւ անլոյս վիրապի մէջ:

Զարմանալի չէ. յայտնի է, որ նոյնիսկ մեծ վարդապետի կեանքը զերծ չէ հին վերապրումներից, քանի որ նրա չարչարանքը եւ երեքօրեայ յարութիւնը որոշ չափով մի խորհրդաւոր անդրադարձ է Ադոնիսեան կարգերի: Զատկական տօները տեսանք որ Ադոնիսեան հանդէսների ընդօրինակութիւնն են նոր բովանդակութեամբ: Հրէական Պասեքը իր արմատով եւս Թամուզի պաշտամունքի հեռանկարն է, որ քահանայապետական գիտուն մեկնութիւնը աշխատել է յարմարցնել հրէական անցեալի նշանաւոր երեւոյթներին: Գարնան հասարակածի շուրջը բեւեռած տօնական հանդէսները նոյն հին պաշտամունքի աղօտացած յուշերն են:

Եթէ եկեղեցու տեսակէտից Զատիկը հրէական Պասեքի արտատիպն է, ժողովրդեան համար հնի նոր կերպարանաւորումն է:

Ադաթանգեղոսի ասելով, Լուսաւորիչը մնում է վիրապի մէջ 13 տարի (ԺԱ. ԺԲ.): Նկատենք անցողակի, որ գլ. Ի. ԻԱ. ԻԲ. նոյն պատմիչը հաշւում է 15 տարի — ակներեւ ապացոյց է, որ Ադաթանգեղոս խմբագրական գործ է, տարբեր աղբիւրներից քաղած:

Տեսանք, որ Ատիս–Ադոնիսը կենդանանում են երեքօրեայ մահից յետոյ. Զալմոքսը չքանում է երեք տարի, իսկ Արէսը պահւում է թոնրի մէջ ուղիղ 13 ամիս:

Արէսի եւ Լուսաւորչի թուերի մէջ նկատելի է զուգադիպութիւն, մանաւանդ որ Ադաթանգեղոսի ձեռագիրները տալիս են երբեմն 13 ամիս ընթերցումը:

Թւում է, որ 13 ամիսը սկզբնական է, որ շատ վաղ դարձել է տարի, որի հետեւանքով առաջացել է եւ ժամանակագրական շփոթ, եւ ոչ միայն Գրիգորի կեանքն է երկարացրած մինչեւ Նիկիոյ ժողովը, այլ եւ թերեւս յետաձգած հայ լուսաւորութեան տարին մինչեւ չորրորդ դարու սկիզբը:

Եթէ Զալմոքսի եռամեայ քունը այլաբանական արտայայտութիւն է թրակիայում ընդունուած սովորոյթին, որով հողին երեք տարի հանգիստ էին տալիս, ապա եւ Լուսաւորչի 13 ամիսը (կամ տարին) նոյնպիսի փոխաբերական չափ է հայ երկրագործի համար: Տասնեւերեք ամիսը կազմում է հայ տոմարական տարին, հաշուած եւ Աւելեաց պակասաւոր ամիսը:

Ասել է, թէ հայերի մօտ սովորութիւն է եղել տարեկան հանգիստ տալ հողին, որ մինչեւ այժմ էլ մնացել է շատ տեղերում մանաւանդ անջրդի արտերի նկատմամբ:

Կլէմբրոտի զրոյցը խորհրդաւոր արեւելցու մասին, որ ամբողջ տարին ապրում էր ոգիների հետ եւ միայն մի անգամ էր երեւում մարդկանց, օժտուած չնչաչարհիկ յատկութիւններով, դարձեալ պատկերաւոր արտայայտութիւն է հողի տարեկան դադարին:

Փռիւգական խորհուրդում, որի նիւթը Կիբէլի եւ Ատիսի կեանքն էր, ընդունուած էր